ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Բացուած է առաջիկայ 1886 տարւոյս բաժանորդագրութիւնն

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԵՌԱՄՍԵԱՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՆ

ՀԱՏՈՐ ԽԴ

ՆՈՐ ՇԱՐ.—ԶՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԾԱՆՕԹ է 'ի բազմաց հետէ ամենայն ազգայնոց մեր Բազմավէպ ուսումնաթերթին իւր գրեթէ կիսադարեան շրջանին մէջ բռնած ուղղութիւնն, և թէ ինչպէս ըստ յառաջագէմ զարգացման ընթերցող հասարակութեան՝ նա ևս իւր մտաւորական վիճակն օրէ օր ազնուացոյց և բարձրացոյց. և 1873 ամին նոր յեղափոխութիւն մի կրելով մինչև ցայսօր փափաքեր և յաջողեր է՝ ըստ վկայութեան ընթերցող հասարակութեան՝ բարձրագոյն ուսումնաթերթի պաշտօն վարել ազգիս մէջ, թողլով օրագրական աստիճանը՝ յատկապէս Օրագրի պաշտօն վարող՝ նոր բանոր լոյս տեսնող ու մարող թերթերու։

ԲԱԶՄԱՎԷՊՆ իրեն յատուկ և սեփական նպատակ ունի առանձին կերպով հայկական հին և նոր մատենագրութեան, պատմութեան, աշխարհագրութեան և այլ զանազան մասանց հայրենի գպրութեան՝ գիտական զարգացումն տալ. ինչպէս նաև ոչինչ նուազ ջանիւք՝ օտար ազգաց մատենագրութիւնն ու բանասիրական և ուսումնական յառաջադացութիւնը ծանօթացընել ազգիս, հանդերձ բարոյական և տնտեսական տեղեկութեամբք՝ ուսումնական գիտելեաց, գեղարուեստից, քաղաքական նշանաւոր դիպաց, կենսագրութեանց երևելի արանց, և այլն, և այլն. միով բանիւ, ճշմարտելով ըստ ամենայնի իւր Բազմավէպ անուան յատկանիշին, մեր ուսումնատեսն ծաղկաքաղ մի է հին և նոր հայրենի դպրութեան՝ ինքնագիր քննական, բանասիրական, մատենագրական հատուածովք, և եւրոպական ուսումնաթերթից ընտրելագոյն յօդուածոց թարգմանութեամբ։ — Ըստ յարմար դիպաց և նիւթոց երբեք զանց ըրած չէ

digitised by A.R.A.R.@

նաև բազմաթիւ գեղեցիկ և հետաքրքիր դիպաց, տեղեաց, անձանց, բուսոց, կենդանեաց, և այլն, պատկերներով զարդարել իւր էջերը, ջանալով այսու գէթ մասամբ մի ազգիս մէջ պատկերազարդ հրատարակութեանց (Illustration) թերին լրացնել։

Ուսումնաթերթի յատկանիշը պահելով կրօնական և կամ յատկապէս քաղաքական խնդիրք՝ իր առարկայէն դուրս են։

ԲԱԶՄԱՎԷՊՆ ձրիաբար ապարէզ կը շնորհէ նաև ամենայն ազգայնոց և քիչ անգամ նաև օտարազգի անձանց ուսումնական, բանասիրական և հայկական խնդրոց վերաբերեալ յօդուածոց, ըստ վերոյիշեալ ուղղութեան ուսումնաթերթիս։

Առ այժմ դարձեալ նախընթաց ժամադրութեամբ պիտի շարունակուի հրատարակութիւնն, ամէն մէկ եռամսեայ Պրակն ութածալ մեծադիր 6 թերթերով, որով տարւոյն մէջ լոյս տեսած չորս Պրակներն՝ կը ձևացընեն Հատոր մի։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔՆ ՀԵՏԵՒԵԱԼՔՆ ԵՆ

Բաժանորդագրութեան գինն է կանխիկ վճարելի.

Եւրոպա և Տաճկաստան . . . . ֆր. 10:—
Եգիպտոս, Հնդկաստան, Պարսկաստան, Ամերիկա . . . » 12:—
Թղթատարական միութենէ դուրս երկիրներ . . . . » 15:—

Տարւոյն վերջը բաժանորդաց ընծայ կը տրուի յաջորդ տարւոյն համար՝ Ս. Ղազարու մէջ տպուած հանրածանօթ Օրացոյցն, և 30 % արտաքոյ կարգի զեղչ կը շնորհուի նաև կանխաւ հրատարակեալ Բազմավէպ Հանդիսի բովանդակ հատորներն ՚ի միասին առնողաց։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է

ՎԵՆԵՏԻԿ. — Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔՆ

Իսկ իրեն գործակալներն են հետևեալ քաղաքաց մէջ.

Կ. ՊՈԼԻՍ . Ղալաթիա. Սերբոս-խան, Մէհրապեան Հ. Յուսիկ Վարդապետ.
ՏՐԱՊԻԶՈՆ . Նուրիխանեան Հ. Մինաս Վարդապետ.
ԿԱՐԻՆ. . . Յովհաննիսեան Հ. Մաղաքիա Վարդապետ.
ՏՓՂԻՍ. . . Սափարեան Հ. Համազասպ Վարդապետ.
ԹԷՈԴՈՍԻԱ. Քուչներեան Հ. Քերովբէ Վարդապետ.
ՊՐՈՒՍԱ. . Էմիրզէեան Յովհաննէս Էֆէնտի։

Բազմավիպի Տեսչութիւնն կը փափաքի իրեն գործակալներ ունենալ՝ վերոյիշեալ քաղաքներէն զատ՝ նաև ուրիշ քաղաքաց մէջ, որոց կը շնորհէ այն ամենայն զիջումն և շահու միջոց, զոր շնորհած է իւր միւս գործակալաց. այս պաշտաման պայմանաց վրայ տեղեկութիւն առնալ ուզողն՝ պէտք է գրով դիմել առ

Խմբագրութիւն Բազմավէպ Հանդիսի, ՚ի Վենետիկ, Ս. Ղազար։

Իսկ օտարազգիք հետևեալ հասցէիւ

Rédaction de la *Revue Polyhistore,* Venise, Ile de St. Lazare.

digitised by A.R.A.R.@